ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ,ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ,ՏՆՏԵՍԱԿԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք,
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գեղակերտ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 08

11 մարտի 2025 թվական

Տեղի ունեցավ Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու ֆինանսավարկային, բյուջետային, տնտեսական, գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդական հարցերի մշտական հանձնաժողովի N **03** նիստը: Նիստին ներկա էին հանձնաժողովի անդամներ՝ Լիլիթ Ենգիբարյանը, Աննա Գևորգյանը, Իրինա Սիրունյանը, Հրայր Ասատրյան :

Հանձնաժողովի նիստի ընթացքում քննարկվեց ՀՀ Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի Ֆինասատնտեսագիտական և գնումների բաժնի պետի կողմից ներկայացված «**Արմավիրի մարզի Խոյ համայնքի «Ծիածանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և «Ամբերդի Հ.Նավասարդյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը դրամաշնորհ հատկացնելու մասին**» նախագիծը՝ Խոյ համայնքի 2025 թվականի մարտի 13-ի ավագանու հերթական նիստում :

Նիստում քննարկվեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի «Ծիածանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում և «Ամբերդի Հ.Նավասարդյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում գործող նախակրթարանների դաստիարակներին աշխատավարձ հատկացնելու նպատակով յուրաքանչյուր պետական ոչ առևտրային կազմակերպությանը 1329300/ մեկ միլիոն երեք հարյուր քսանինը հազար երեք հարյուր դրամ/ գումար հատկացնելու մասին:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու ֆինանսավարկային, բյուջետային, տնտեսական, գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդական հարցերի մշտական հանձնաժողովը տալիս է հետևյալ եզրակացությունը՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի «Ծիածանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում գործող նախակրթարանների դաստիարակին աշխատավարձ հատկացնելու նպատակով տրամադրել պետական ոչ առևտրային կազմակերպությանը 1329300/ մեկ միլիոն երեք հարյուր քսանինը հազար երեք հարյուր դրամ/ գումար:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի «Ամբերդի Հ.Նավասարդյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում գործող նախակրթարանի դաստիարակին աշխատավարձ հատկացնելու նպատակով տրամադրել պետական ոչ առևտրային կազմակերպությանը 1329300/ մեկ միլիոն երեք հարյուր քսանինը հազար երեք հարյուր դրամ/ գումար:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝	ԼԻԼԻԹ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝	ԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐ՝	ԻՐԻՆԱ ՍԻՐՈՒՆՅԱՆ
	ՀՐԱՅՐ ԱՍԱՏՐՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ
ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-Ի ԹԻՎ --- -Ա ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐԻ

ՀՀ	ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՏԿԱՑՎՈՂ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՉԱՓԸ /ԴՐԱՄ/
1	Ամբերդի Հ. Նավասարդյանի անվան միջնակարգ դպրոց	1329300
2	Ծիածանի միջնակարգ դպրոց	1329300
	Ընդամենը	2658600

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ՇԱՌՈՅԱՆ